ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 29 » հուլիս 2026թ. No 4377 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 120.15-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/3889-26 առ 23.07.2026թ. գրությունը և ռեֆերենտ երկրի փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը լիազոր մարմնի նախաձեռնությամբ փոխադարձ ճանաչելու (ԵԱՏՄ գրանցման փոխադարձ ճանաչում) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 2 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 120.15-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետերի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Восстановимая подпись

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Подписано: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի հուլիսի «29 » - ի  N4377 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը լիազոր մարմնի նախաձեռնությամբ փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կետամին | կետամին (կետամինի հիդրոքլորիդ) | լուծույթ ն/ե և մ/մ ներարկման | 50մգ/մլ; (5) ամպուլներ 2մլ, (10) ամպուլներ 2մլ | Մոսկվայի էնդոկրինային գործարան ՖԳՈւՁ, («ԷՆԴՈՖԱՐՄ» ՖԳՈւՁ), Նովոխոխլովսկայա փ. 25, շ. 1, Նիժեգորոդսկի մունիցիպալ օկրուգի ներհամայնքային տարածք, Մոսկվա, 109052- որակի և բաց թողնման հսկող, "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖԳՈւՁ («ԷՆԴՈՖԱՐՄ» ՖԳՈւՁ), Նովոխոխլովսկայա փ. 25, շ. 2, Նիժեգորոդսկի մունիցիպալ օկրուգի ներհամայնքային տարածք, Մոսկվա, 109052, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող | Ռուսաստան | "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖԳՈւՁ, («ԷՆԴՈՖԱՐՄ» ՖԳՈւՁ), Նովոխոխլովսկայա փ. 25, շ. 1, Նիժեգորոդսկի մունիցիպալ օկրուգի ներհամայնքային տարածք, Մոսկվա, 109052 | Ռուսաստան | Դ | 24345 (025175) 22.07.2026 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Կետամին | կետամին (կետամինի հիդրոքլորիդ) | լուծույթ ն/ե և մ/մ ներարկման | 50մգ/մլ; (5) ամպուլներ 5մլ, (10) ամպուլներ 5մլ | Մոսկվայի էնդոկրինային գործարան ՖԳՈւՁ, («ԷՆԴՈՖԱՐՄ» ՖԳՈւՁ), Նովոխոխլովսկայա փ. 25, շ. 1, Նիժեգորոդսկի մունիցիպալ օկրուգի ներհամայնքային տարածք, Մոսկվա, 109052- որակի և բաց թողնման հսկող, "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖԳՈւՁ («ԷՆԴՈՖԱՐՄ» ՖԳՈւՁ), Նովոխոխլովսկայա փ. 25, շ. 2, Նիժեգորոդսկի մունիցիպալ օկրուգի ներհամայնքային տարածք, Մոսկվա, 109052, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող | Ռուսաստան | "Մոսկվայի էնդոկրինային գործարան" ՖԳՈւՁ, («ԷՆԴՈՖԱՐՄ» ՖԳՈւՁ), Նովոխոխլովսկայա փ. 25, շ. 1, Նիժեգորոդսկի մունիցիպալ օկրուգի ներհամայնքային տարածք, Մոսկվա, 109052 | Ռուսաստան | Դ | 24346 (025175) 22.07.2026 |